

Հերզ գավառը, աղվանից Ստեփանոս կաթողիկոսի մահվան առիթով, հիշատակում է Կիրակոս Գանձակեցին, սակայն պատմիչի հաղորդումը («Երևանից (աղվանից կաթողիկոսն— Ն. Մ.) այս անգր կացեալ մինչև մեռաւ ի Հերզ գաւառի»)⁹, «Հերք» ընթերցման հավանականությունը հաստատելով հանդերձ, տեղորոշման համար կովաններ չի ընձևում: Ի տարբերություն Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Գոշը երկիցս խոսում է «Հերքան-բերդի» մասին: Ի՞նչ կապ կարող են ունենալ այս տեղանունները: Բ. Ուլուբաբյանի իրավացի դիտողությամբ, «Հերզ»—«Հերքան-բերդ»-ի դեպքում ես գործ ունենք բերդ-գավառ կապն արտացոլող զույգ տեղանունների հետ¹⁰: Գոշի «Աղվանից ժամանակագրությունում» բերդերին կից տարածքը հաճախ է ներկայացվում իբրև ավելի ընդարձակ աշխարհագրական միավոր՝ «աշխարհ» ու «գաւառ»¹¹, սակայն «Հերզան-բերդ»-ը, թվում է, տարբերվում է այն առումով, որ ծագում է գավառանունից: Կարելի է ենթադրել, որ «Հերքան»-ը կազմվել է «Հերզ-Հերք»-ից, «եան» ածականակերտով (Հերզեան, Հերքեան բերդ)¹², որից էլ «եա-ա» պարզեցմամբ¹³ ստացվել է «Հերզան, Հերքան-բերդ»-ը: Որ Ստեփանոս Օրբելյանի Պատմության սկզբնական բնագրում եղել է «Հերք» (ծագած «ք» և «թ» տառերի շփոթության հետևանքով) ու «Հեր» (վերջնատառի բացթողման հիմքի վրա)¹⁴ ընթերցումները անընդունելի են, ցույց են տալիս ձևագրական տվյալները: Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող ինչպես ամբողջ Պատմության, այնպես էլ ԿԶ (ԿԵ) գլխի առավել հնագույն (ԺԶ—ԺԸ դդ). գրչագրերը համոզիչ կերպով հավաստում են «Հերք» ընթերցման ստուգությունը¹⁵: Տեղանվան «Հերզ» և «Հերք» տարբերակները, հավանաբար, ծագել են խոսվածքային տարբերությունների հիմքի վրա, ընդ որում, եթե նկատի ունենք «գ-ք» հնչյունափոխությունը¹⁶, ապա առավել նախնական ձև պետք է դիտել «Հերզ»-ը:

Հերք (Հերքան) բերդը, վերջին խորեղմշահ Զալալ աղ-Դինի վեզիր Շարաֆ ալ-Մուլքի գործնություն կապակցությամբ հիշատակում է նաև Զալալ աղ-Դինի կենսագիր ան-Նասավին: Պատմելով խորեղմշահի շուրջ մեկտարյա բացակայության ժամանակաշրջանում Անդրկովկասում Շարաֆ ալ-Մուլքի ձեռնարկումների մասին, պատմիչը գրում է, որ վեզիրը, տեղեկություն ստանալով Գանձակում խորեղմշահի վալիի մահվան վերաբերյալ, մեկ-

⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 181:

¹⁰ Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչնի իշխանությունը X—XVI դարերում, Եր., 1975, էջ 120—121, ծ. 108:

¹¹ Հմմտ., «Իշխան աշխարհին ձառաբերող և նորին ղդեակին» (Ղ. Այիշան, Հայապատում, հ. Բ. Վենետիկ, 1901, էջ 387), «Սետունճ ոմն ծառայ Բապակարդանայ, որ էր ի ղդեկին եղեալ՝ որ կոչի Զարեք, նա մախանս ունելով ընդ Ռովագու, վասն յառաջագոն պաշարելոյ զնա յիրում ամրոցին և անրման գաւառին իւրոյ» (նույն տեղում, էջ 388):

¹² Հմմտ. Ուտի-Ուտիեանն գաւառ (տե՛ս Ն. Հյուբշման, Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 277—278):

¹³ Տե՛ս Ս. Ավագյան, Վիճակն արձանագրությունների հնչյունաբանություն (X—XIV դդ.), Եր., 1973, էջ 206:

¹⁴ Նույն պատճառով «Հեր» ընթերցումը պատահում է նաև Կիրակոս Գանձակեցու Պատմության ձևագրերում, տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 181, տողատակ:

¹⁵ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձևագրեր № 1482 (1678 թ.), թ. 368 ք, 1488 (1781 թ.), թ. 165 ա, 1724 (ԺԶ դ.), թ. 40 ա, 2560 (1692 թ. առաջ), թ. 13 ք, 2698 (ԺԷ դ.) թ. 137 ա, 3070 (1669—1674 թթ.), 380 ա, 3498 (1624—1625 թթ.), թ. 120 ա, 4584 (1668 թ.), թ. 240 ա, 5501 (1683—1684 թթ.), թ. 185 ք. 8344 (ԺԷ դ.), թ. 140 ք.: «Հեր» ընթերցումը առկա է միայն 1776 թ. գրված № 6882 ձևագրում (թ. 10 ք.):

¹⁶ «Բ» ձայնորդից հետո «գ» ձայնից պայթականի՝ «ք» ընչեղ խուլի հնչյունափոխվելու մասին տե՛ս Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 264—265: